

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

<b>Պաշտոնի անվանումը.</b>	Ազգային փորձագետ
<b>Ծրագրի անվանումը.</b>	Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում Հայաստանում
<b>Ծրագրի տևողությունը.</b>	2015 թվականի հունիս 1– 2015 թվականի դեկտեմբերի 15
<b>Սկիզբը.</b>	2015 թվականի օգոստոսի 1
<b>Պայմանագրի տեսակը.</b>	Ծառայությունների մատուցման պայմանագիր
<b>Վայրը</b>	ՀՀ, ք. Երևան

### **Ընդհանուր տեղեկություններ ծրագրի մասին**

«Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում Հայաստանում» ծրագիրն իրականացվում է Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի) ներկայացուցչության և ՀՀ արդարադատության նախարարության համագործակցության շրջանակում ՀՀ ԱՆ «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Այն ուղղված է օրենքին առնչվող, այդ թվում՝ քրեական, քաղաքացիական կամ վարչական արդարադատության համակարգերի և մարմինների շրջանակում որպես տուժող, զոհ, օրենքի հետ խնդիր ունեցող երեխաների իրավունքների պաշտպանության իրավական և գործնական ընթացակարգերի զարգացման խթանմանը և բարելավմանը, արդարադատության մատչելիության ապահովմանը:

Ծրագրի շրջանակներում իրականացվելու է օրենսդրության վերանայում երեխաների իրավունքների պաշտպանության դիտանկյունից, անչափահասների արդարադատության վերաբերյալ տեղեկատվության հավաքման առկա վիճակի գնահատում և միասնական, համապարփակ տեղեկատվական շտեմարանի ստեղծմանն ուղղված գործողությունների պլանի կազմում, կարողությունների զարգացում օրենքի հետ խնդիրներ ունեցող, վկա և տուժող երեխաների հետ աշխատանքում քննչական անձնակազմի համար:

Հաշվի առնելով տարբեր գերատեսչությունների դերակատարության և համագործակցության կարևորությունը անչափահասների արդարադատության համակարգի կայացման գործում՝ ծրագրի շրջանակներում նախատեսվում է համակարգող խորհրդի ստեղծում:

### **Աշխատանքի շրջանակը**

Ծրագրի աշխատակազմի, միջազգային փորձագետի հետ համատեղ ծրագրի շրջանակում ապահովել ծրագրի հետևյալ բաղադրիչի կատարումը.

- Հայաստանի Հանրապետությունում օրենքի հետ առնչված երեխաների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման գործընթացի և ընթացակարգերի գնահատում և,
- Դրա հիման վրա ՄԱԿ-ի համապատասխան ցուցանիշների համադրմամբ միասնական շտեմարանի ձևավորման գործողությունների պլանի առաջարկի կազմում:

## **Պարտականությունները**

Փորձագետն իրականացնելու է հետևյալ աշխատանքները.

• Օրենքի հետ խնդիր ունեցող, զոհ/տուժող դարձած և հանցավորության վկա հանդիսացող երեխաների հետ առնչվող տարբեր մարմինների կողմից հավաքագրվող, պահպանվող և վերլուծվող տեղեկատվության վերաբերյալ իրականացնել քանակական և որակական հետազոտություն,

• Միջազգային փորձագետի խորհրդատվությամբ իրականացնել համապատասխան գրականության և հետազոտական աղբյուրների վերլուծություն՝ միջազգային պրակտիկայում առկա մեթոդաբանությունները բացահայտելու և դրանք հետազոտության ու գնահատման մեջ կիրառելու նպատակով,

• Քարտեզագրել բոլոր այն կառույցները, որոնք կազմակերպում և իրականացնում են տեղեկատվության հավաքագրում օրենքի հետ խնդիր ունեցող, հանցագործության զոհ, տուժած կողմ, հանցագործության վկա երեխաների վերաբերյալ,

• Ուսումնասիրել և գնահատել տեղեկատվության հավաքման ընթացքը, աղբյուրները, համապարփակությունը, առկա խնդիրները և համապատասխանությունը ՄԱԿ-ի կողմից սահմանված և երաշխավորված անչափահասների արդարադատության տեղեկատվական ցուցանիշներին («UNICEF-UNODC անչափահասների արդարադատության ցուցանիշների ձեռնարկ»),

• Մասնակցել տվյալների շտեմարանի ստեղծման գործողությունների պլանի կազմման աշխատանքներին, որը կներառի օրենքի հետ խնդիր ունեցող, զոհ/տուժող հանցագործության վկա հանդիսացող երեխաների տվյալների անհրաժեշտ հիմնական ցուցանիշները, դրանց հավաքագրման, ամփոփման վերաբերյալ վերլուծությունը և առաջարկները, անհրաժեշտ կառույցները, տեղեկատվության հավաքման, վերահսկողության և փոխանակման հիմնական ընթացքը, վերլուծությունը, շտեմարանի ստեղծման, զարգացման համար անհրաժեշտ և

պահանջվելիք պայմանները, այդ թվում՝ տեխնիկական, մարդկային, իրավական, կազմակերպական, ընթացակարգային և այլն,

- Աջակցել միջազգային փորձագետին՝ անչափահասների արդարադատության տեղեկատվական ազգային միասնական համակարգի վերաբերյալ առաջարկությունների մշակման հարցում,

- Մասնակցել ծրագրային թիմի հանդիպումներին, միջոցառումներին, աշխատանքային հանդիպումներին, քննարկումներին:

- Տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն և աջակցություն միջազգային փորձագետին, ապահովել վերջինիս կողմից տրամադրված խորհրդատվության և տեղեկատվության կիրառումն իրականացվող աշխատանքներում,

- Պատրաստել և ներկայացնել աշխատանքային պլան, ժամանակացույց, աշխատանքային ընթացիկ հաշվետվություններ և այլ պահանջվող փաստաթղթեր:

### **Արդյունքը**

1. Օրենքի հետ խնդիր ունեցող, հանցագործության վկա, զոհ, տուժած երեխաների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման քաղաքականության, իրավական և կազմակերպական հիմքերի, ընթացակարգերի, հիմնական ցուցանիշների, տեղեկատվության վերլուծության և վերահսկողության, զարգացման վերաբերյալ ամբողջական գնահատման զեկույց,

2. Գնահատման արդյունքների հիման վրա գործողությունների պլան՝ օրենքի հետ խնդիր ունեցող, հանցագործության վկա, զոհ, տուժած երեխաների վերաբերյալ տեղեկատվության միասնական շտեմարան ստեղծելու համար:

### **Պահանջվող որակավորում, փորձ և կարողություններ**

#### **Կրթություն.**

Բարձրագույն կրթություն

#### **Աշխատանքային փորձը**

Նվազագույնը 5 տարվա աշխատանքային փորձ, մասնավորապես երեխաների իրավունքների պաշտպանության, արդարադատության ոլորտներում: Նշված ոլորտներում հետազոտական և վերլուծական աշխատանքի փորձը կդիտվի որպես առավելություն:

## **Կարողություններ.**

- Հետազոտություն, ուսումնասիրություն և գնահատում իրականացնելու գիտելիքներ և կարողություն,
- թիմի հետ աշխատելու կարողություն,
- Ժամանակ հատկացնելու պատրաստակամություն,
- Գերազանց վերլուծական և հաշվետվություններ գրելու, ներկայացնելու հմտություններ,
- ՀՀ մարզեր գործուղումների մեկնելու պատրաստակամություն,
- Հայերենի և անգլերենի գերազանց իմացություն,
- Համակարգչային գիտելիքներ. (MS Word Excel, PowerPoint; web applications)